ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. փետրվարի 24-ից 28-ը Լիտվայի Հանրապետության Ծրագրերի կառավարման կենտրոնական գործակալության կողմից կազմակերպված Հայաստանի Հանրապետությունում սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման վերաբերյալ ռազմավարական փաստաթղթի մշակման շրջանակներում աշխատանքային խմբի (ԱԱԾ ՍԶ, ԱԽ գրասենյակ, ՊԵԿ, ԱԳՆ)) ներկայացուցիչների ճանաչողական այցին մասնակցելու նպատակով Լիտվայի Հանրապետություն՝ քաղաք Վիլնյուս գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արտեմ Կարապետյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետ:

2" Գործուղման վայրը և ժամկետները՝

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս 2025թ. փետրվարի 24-ից 28-ը:

3" Հրավիրող կողմը՝

Լիտվայի Հանրապետության ֆինանսների նախարարության ենթակայության ներքո գործող «Ծրագրերի կառավարման կենտրոնական գործակալություն» հանրային ինստիտուտը (Central Project Management Agency, այսուհետ՝ CPVA):

4" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Այցի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման վերաբերյալ ռազմավարական փաստաթղթի մշակման նպատակով ուսումնասիրել ԵՄ, մասնավորապես՝ Լիտվայի Հանրապետության սահմանների համալիր կառավարման համակարգերի, այդ թվում՝ ոլորտում կիրառվող ստանդարտների, սահմանին ծառայություն իրականացնող մարմինների փոխգործելիության հիմքերի և կիրառելի մեթոդների առաջավոր փորձը:

5" Քննարկված թեմաները՝

Լիտվայի Հանրապետության ՆԳՆ պետական սահմանի պահպանման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ներկայացվել է.

1) ներկա իրավիճակը, ծառայության կառուցվածքը, հսկողության գոտիները և իրավասությունների շրջանակը,

2) Ծառայության կողմից իրականացվող քրեահետախուզական և նախաքննչական գործողությունները,

3) Սահմանային հսկողության համար կիրառվող տեխնիկական լուծումները,

4) Լիտվայի Հանրապետության տարածքով անձանց և բեռների տարանցիկ փոխադրման նկատմամբ հսկողությունը,

5) Լիտվայի Հանրապետության տարածք անձանց մուտքի և ելքի նկատմամբ հսկողությունը:

Առանձին քննարկումներ են իրականացվել Լիտվայի Հանրապետությունում մաքսային գործընթացների վերաբերյալ համապատասխան պաշտոնատար անձանց հետ:

6"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել Լիտվայի Հանրապետության ՆԳՆ պետական սահմանի պահպանման ծառայության գլխավոր գրասենյակում Ծառայության հրամանատարի և այլ պաշտոնատար անձանց հետ:

Հանդիպումներ են տեղի ունեցել Կենա և Մեդինինկայ քաղաքներում տեղակայված անցումային կետերում ծառայություն իրականացնող սահմանապահ և մաքսային ծառայողների հետ: Քննարկվել են ՌԴ Կալինինգրադ քաղաքից դեպի ՌԴ (և հակառակը) երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող, ինչպես նաև Մեդինինկայ ամենախոշոր սահմանային անցումային կետով տեղափոխվող անձանց և բեռների նկատմամբ սահմանային և մաքսային հսկողության մի շարք հարցեր, կիրառվող էլեկտրոնային համակարգերի վերաբերյալ մանրամասն և հսկողության առանձնահատկությունները:

Այցելություն է կազմակերպվել Լիտվայի Հանրապետության ՆԳՆ պետական սահմանապահ ծառայության դպրոց (ուսումնարան) և Վիլնյուսի օդանավակայան:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՀ ԱԱԾ ՍԶ-ի և Լիտվայի Հանրապետության ՆԳՆ պետական սահմանապահ ծառայության միջև ստորագրվել է 2025-2026թթ. համագործակցության պլան:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցչին տեղեկատվություն ստանալ 3-րդ երկրի և նրա էքսկլավ հանդիսացող տարածքի միջև այլ երկրի տարածքով տարանցիկ փոխադրման վերաբերյալ առաջատար փորձը:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ գործառույթների արդյունավետության բարձրացմանը և կարող է անհրաժեշտության դեպքում այդ փորձը ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

3/4/2025

X

ԱՐՏԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

9" Ստորագրությունը, ամսաթիվը

Signed by: KARAPETYAN ARTEM 1101750332

04.03.2025թ.